

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը «ավտոմոբիլ» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացությամբ՝

«գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոց»՝ ավտոտրանսպորտային միջոց, որում բացի հեղուկ նավթային վառելիքից (բենզին, դիզելային վառելիք) օգտագործվում է նաև սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազ:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «լ» «լա» և «լբ» կետերով՝

«լ) սահմանում է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման կարգը.

լա) սահմանում է գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը.

լբ) սահմանում է բալոնների պարբերական վկայագրման ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների արտադրական բազաներին և բանվորական ու ինժեներատեխնիկական անձնակազմերի գիտելիքներին ներկայացվող պահանջները:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող լրացման նպատակն է՝ օրենսդրական հիմք ապահովել ավտոտրանսպորտային միջոցները գազաբալոնային սնման համակարգերով լրակազմելու գործընթացի կանոնակարգման և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ դրանց անվտանգության ապահովման գործունեությունը կարգավորող ակտերում անհրաժեշտ սահմանափակումներ կիսելու համար:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սահմանափակումները և պարտավորությունները կարող են սահմանվել բացառապես օրենքներով նախագծով ներկայացված լրացումը գործադիրին թույլ կտա քաղաքացիների անվտանգության ապահովման նպատակով որոշակի սահմանափակումներ սահմանել գազաբալոնային սարքավորումներով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների վերասարքավորումը և շահագործումը կարգավորող իրավական ակտերում:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը հանդիսանալով ոլորտի լիազոր մարմին տրանսպորտի ոլորտը կարգավորող իրավական ակտերը մշակելիս պարտավոր է օրենսդրորեն ապահովել գազաբալոնային սնման համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործման պայմանները:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Ապահովել գազավառելիքային սնման համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ շահագործումը :

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Որոշման նախագիծը մշակել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

6. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման անվտանգության մակարդակի բարձրացում, դրանց հետ կապված պատահարների նվազեցում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և (կամ) լրացումների անհրաժեշտությունը.

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Օրենքի նախագծով նախատեսվող լրացումը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին չի հակասում:

3. Այլ տեղեկություններ.

Չկան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.

Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը ինչպես նաև տեղադրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում(www.mtc.am)

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.

Նախագծի վերաբերյալ հասարակական քննարկումներ չեն իրականացվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը

Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
			n +1	n +2	n +3
			Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր					
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					